ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» դեկտեմբեր 2013թ. N 409

Ք.Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ" ենթակետով, 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1336-Ն որոշումը, 2013 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հատուկ դպրոցներում կրթական ծրագրերի ուսուցման գծով ծառայությունների իրականացման նպատակով

որոշում եմ՝

1. *Հայաստանի Հանրապետության 2013 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին տարրական ընդհանուր կրթության «Հատուկ կրթություն » ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 73613800/ յոթանասուներեք միլիոն վեց հարյուր տասներեք հազար ութ հարյուր / դրամ գումարը, միջնակարգ ընդհանուր կրթության «Հատուկ կրթություն» ծրագրի տնտեսագիտական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 92767800 /ինսուներկու միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր/ դրամ գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության թվով 2/երկու/ հատուկ դպրոցներին աշակերտ թվերին համապատասխան վերաբաշխել համաձայն հավելվածի:*
2. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին (Փ. Կարապետյան) սահմանված կարգով իրականացնել ուսուցման ծառայությունների գնման պայմանագրերի փոփոխությունները;*
3. *Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:*

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2013 թվականի դեկտեմբերի 11-ի
N 409 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՏՈՒԿ
ԿՐԹՈՒԹՅԱՆ 2013Թ ՃՇՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ

h/h	Դպրոցի անվանումը			
		09 01 02 03	09 02 01 04	Ընդամենը
1	2	3	4	5
1	Արմավիրի թիվ 1 հատուկ /օժանդակ /դպրոց	33822.9	44062.9	**77885.8**
2	Վաղարշապատի թիվ 2 հատուկ /օժանդակ /դպրոց.	39790.9	48704.9	**88495.8**
	Ընդամենը	73613.8	92767.8	**166381.6**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ